ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 736 6 Հունիսի, 2001թ.

ԱՄԵՆԱՊԱՏԻՎ
Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ
Երուսաղեմ, Իսրայել

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք

Գոհունակությամբ տեղեկացանք, որ Երուսաղեմի Հայոց Պատրիարքի պաշտոնում Ձեր ծառայության տասնամյա հոբելյանի առիթով Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանի նախաձեռնությամբ Պոլսում կազմակերպվում է մեծարման հանդիսություն, հընթացս որի պիտի տեղի ունենա նաև Ձեր գրքի շնորհանդեսը:

Այս առիթով Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սրտաբուխ շնորհավորանքները, եղբայրական սերն ու ջերմ բարեմաղթանքներն ենք հղում Ձեզ, սիրելի Սրբազան Պատրիարք, որ ահավասիկ մեկ տասնամյակ անմնացորդ նվիրումով և ամենայն պատասխանատվությամբ ավանդաշատ Սուրբ Աթոռի գահակալի ծանր ու պատասխանատու առաքելությունը արդյունավորում եք անձնամատույց հավատով ու սիրով իմաստավորված գործերով, ազգաշահ ու եկեղեցաշեն բազում հաջողություններով ու ծեռքերումներով:

Ուրախ ենք մեծապես, որ Հայրապետության առաջին իսկ տարում առիթ ունեցանք լինելու Երուսաղեմում և ականատես լինելու ներդրած Ձեր ջանքերին՝ ի շինություն և պայծառություն Երուսաղեմի Հայոց Պատրիարքության: Ուրախ ենք այսօր արձանագրելու, որ Ձեր նման նվիրյալ ու նախանձախնդիր հոգևորականաց շնորհիվ է պայծառ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին և զորեղ մեր միաբանությունը:

Մեր բարձր գնահատանքն ենք հղում նաև Պոլսի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Մութաֆյանին՝ հոբելյանական հանդիսության կազմակերպման համար:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք, առ Աստված Մեր ամենաջերմ աղոթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջ երկար գահակալություն և երկնատուր բյուր բարիքներ՝ Բարձրյալ Տիրոջ հանապազ օրհնությամբ և առաջնորդությամբ շարունակելու Պատրիարքական շնորհաբեր առաքելությունը:

Եղբայրական սիրո ողջունիվ,
Աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

digitised by A.R.A.R.@

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԱՆԹԻԼԻԱՍ - ԼԻԲԱՆԱՆ

Թիւ

Անթիլիաս,

ԳԻՐ ՍԻՐՈՅ ԵՒ ՎԿԱՅՈՒԹԵԱՆ

Մեր հոգեւոր եղբօրմէն, Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Տ. Մեսրոպ Սրբազանէն իմացանք, որ այս երեկոյեան շնորհանդէս կազմակերուած է ի պատիւ Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն Հայոց Պատրիարքին, Մեր հոգեւոր եղբօր՝ Տ. Թորգոմ Արք. Մանուկեանին, վերջերս հրատարակուած իր յուշերուն առիթով: Բարձրօրէն կը գնահատենք հոգեմտաւոր իրագործումի մը դիմաց խոնարհելու ու ձեր յարգանքը մատուցելու այս գեղեցիկ նախաձեռնութիւնը: Իմանալով այս մասին, Մենք ալ ուզեցինք անձնական վկայութեամբ մը մասնակից դառնալ այս հոգեպարար հաւաքին:

Արդարեւ, Մենք Թորգոմ Պատրիարքը ճանչցանք շուրջ երեսուն տարիներ առաջ երբ ինք Առաջնորդն էր Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմին եւ Մենք՝ ուսանող Նիւ Եորքին մէջ: Ճի՛շդ է, պայմաններու բերումով մեր կապերը մնայուն ու անմիջական չեղան, սակայն այդ տարիներէն սկսեալ հոգեկան կապ մը ստեղծուեցաւ մեր միջեւ: Հոգեկան կապ մը՝ Թորգոմ Սրբազանին եւ Արամ Վարդապետին միջեւ, որ կը շարունակուի այսօր Արամ Ա. Կաթողիկոսին եւ Թորգոմ Պատրիարքին միջեւ, դարձեալ՝ հակառակ Լիբանանի եւ Երուսաղէմի միջեւ գոյութիւն ունեցող քաղաքական ոչ-նպաստաւոր պայմաններուն:

Թորգոմ Պատրիարքին մօտ Մենք առաջին հերթին ճանչցանք *հոգեւորական մարդը*, հայ եկեղեցւոյ յանձնառու սպասաւորը, որուն համար հաւատքի առաքելութիւնը, Քրիստոսի Աւետարանին քարոզութիւնը եւ Հայ Եկեղեցւոյ առաքելահաստատ հաւատքին, դաւանանքին ու աւանդութեան յաւերժացումը կը մնան իր ծառայական կեանքին ուղեցոյցը:

Թորգոմ Պատրիարքին մօտ Մենք ճանչցանք նաեւ *մշակոյթի մարդը*, որ իր վարչական պատասխանատուութեանց ու հոգեւոր ծառայութեան առընթեր իր նուիրեալ ու հաւատաւոր սպասաւորութիւնը կատարեց ու կը շարունակէ կատարել մեր հոգեւոր արժէքներու պանծացման ու կենսագործման մեր ժողովուրդի կեանքէն ներս: Թորգոմ Պատրիարքին անունը արձանագրուած պիտի մնայ մեր մշակոյթի ժամանակակից պատմութեան մէջ:

Թորգոմ Պատրիարք, իր երիտասարդ տարիքէն սկսեալ ոչ միայն իր հրատարակութիւններով ծանօթ է, այլ նաեւ իր ունեցած բանաստեղծական երկունքով ու թռիչքով, իր ստեղծագործ թէ թարգմանական բանաստեղծութիւններով:

Թորգոմ Պատրիարքը նաեւ այն սակաւաթիւ անձերէն մէկն է, որ մօտէն ճանչցած է հայ երաժշտութիւնը, յատուկ սէր ու թծախնդրութիւն ունի մանաւանդ հայ հոգեւոր երաժշտութեան նկատմամբ ու դարձած է անոր գլխաւոր տարածիչներէն մէկը:

Հայ մշակութային արժէքներուն նկատմամբ Թորգոմ Պատրիարքին պաշտամունքի հասնող սէրը իր գործնական արտայայտութիւնը գտաւ նաեւ Երուսաղէմի պատրիարքարանին կողմէ կատարուող հրատարակութիւններու ու մշակութային այլ նախաձեռնութիւններու ճամբով:

Վստահ ենք, որ Թորգոմ Պատրիարքը վերանորոգ աշխուժութեամբ ու վառ տեսիլքով պիտի շարունակէ իր նախորդներուն՝ Դուրեաններուն ու Գուշակեաններուն Սաղիմական հոգեմտաւոր առաքելութիւնը՝ հայ մտքին ու հոգիի անդաստանէն ներս:

Թող Աստուած երկար եւ քաջառողջ կեանք պարգեւէ մեր սիրելի հոգեւոր եղբօր՝ Թորգոմ Պատրիարքին:

7 Յունիս, 2001
Անթիլիաս, Լիբանան

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

digitised by A.R.A.R.@